Մրբվան Ի. Մահմեդ նշանակեց Իսահակ Ի. Մուսլիմին կառավարիչ Հայաստանի վերայ, իսկ ինքն շարունակեց իւր մարտը Մուսաֆիրի հետ, որ (ամրացած) էր Սիսականի Կիլաբ ամրոցում։

Երբ փոխուեցաւ հարստութիւնն եւ Սաֆֆահ աբուլ Աբբաս (749 – 754) ամիրապետ եղաւ, Միջագետքի եւ Հայաստանի վերայ կառավարեց Աբու Ջաֆար ալ Մանսուր. նա ուղարկեց Խորասանից Մուսաֆիրի եւ նորա համամիտների դէմ զօրապետներից մէկից, որ ճակատեցաւ ապստամբների հետ, յաղթեց նոցա եւ սպաննեց Մուսաֆիրին։ Փայտակարանի բնակիչք ամրացան Կիլաբ ամրոցում զօրապետ Քիդադ Ի. Սաֆֆար Փայտակարանցու հետ, բայց ստիպուեցան վայր իջանել՝ իրանց կեանքը խնայելու պայմանով։

Երբ Մանսուր ամիրապետ եղաւ (754 – 775), նա կարգեց Եզիդ Ի. Ուսայդ Սուլամիին Հայաստանի վերայ կառավարիչ, որ նուաճեց Ալանացոց դուռը, դրեց այնտեղ մի գունդ հեծելազօր դէ-ռնէ[1] մարդկանցից, հպատակեցրեց Ծանարներին եւ ստիպեց նոցա հարկ վճարել։ Ապա Մանսուրի հրամանով Եզիդ ապգականացաւ Խազարաց թագաւորի հետ. կինը ծնեց նորան մի որդի, որ վախճանեցաւ, նոյնպէս եւ մայրը ծրնունդքի ժամանակ։ Մանսուր ուղարկեց Եզիդին Շիրուան երկիրը, որ ունէր նաֆտի եւ աղի հանքեր, եւ դրեց այն նորա իշխանութեան ներքոյ։ Եզիդ շինեց Արջէլ՝ մեծ եւ փոքր՝ քաղաքները եւ բնակեցրեց այնտեղ Պաղեստինի ժողովրդից։

Ինձ պատմել է Մահմեդ Ի. Իսմայիլ Պարտաւի բոլոր ծերերի ասելով, թէ Շիրուան գաւառի

---

1 Այսպէս կը կոչէին զինուորներ, որոց անուններն մատեանի մէջ էր անցկացրած եւ որոնք մշտական ռոճիկ կը ստանային։